



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁԱԺՈՂՈՎ

ANQA-2021/58

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2021 թ. N 58

«ԵՐԵՎԱՆԻ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ <<ք. Երևան, Մամիկոնյան 52

Նախորդ հավատարմագրման մասին

որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով <<կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված <<մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «<<մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՊԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ծևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ծևավորման կարգով, 2021 թվականի հունիսի 24-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-Ի (այսուհետ՝ ՄՈՒՀ, ԵՒՊԹ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական գեկույցը, գեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտողություններն ու առաջարկությունները, գեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ծևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ՄՈՒՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 14 մայիսի 2020թ.

ինքնավերլուծության ներկայացում՝ 8 օգոստոսի 2020թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 9-12 նոյեմբերի 2020թ.

փորձագիտական զեկուցի ներկայացում՝ 12 փետրվարի 2021թ.

թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ 11 մարտի 2021թ.

«Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը։ Գնահատումը կատարվել է «Հառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով։

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից «Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ապահովման ներքին համակարգ» չափանիշները գնահատվել են անբավարար։

1. ՄՈՒՀ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավաք շնորհում

ԵԻՊՔ-ի մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ) համահունչ են իր առաքելությանը և համապատասխանում են ՈԱԾ-ի բնութագրիչներին, կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա։ Առանձին ՄԿԾ-ներ նախագծվել են միջազգային փոխգործակցության հիման վրա։ Գործում են գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, ՄԿԾ փաթեթում առկա են դասավանդման մեթոդների ընդհանրական նկարագրություններ։

Քոլեջում առկա է պոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության որոշակի մրցութային ընթացակարգ։ Դասախոսական կազմը համալրված է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում աշխատանքային փորձ և գիտական աստիճան ունեցող, ինչպես նաև գործառու մասնագետներով։ Քոլեջի ղեկավարությունը գիտակցում է ուսումնական գործընթացում երիտասարդ կադրերի ներգրավման և նրանց մանկավարժական ու մասնագիտական հմտությունների աստիճանական զարգացման կարևորությունը և քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ։

Քոլեջում իր առաքելության և մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար առկա է անհրաժեշտ ուսումնական միջավայր, ռեսուրսները և նյութատեխնիկական բազան հնարավորություն են ընձեռում ՄԿԾ-ների իրականացման համար։

2. Կառավարման ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ, կառավարման համակարգը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավաք շնորհմանը

Քոլեջի ընդհանուր գործունեության երկարաժամկետ պլանը 2018-2022թթ. Ռազմավարական ծրագիրն է։ Սակայն ռազմավարական ծրագրի իրականացման հստակ պլան՝

գործողությունների իրականացման ժամանակացույցով ու գնահատման ցուցիչներով, պատասխանատուններով և կատարողներող, մշակված չէ:

Կազմակերպական կառուցվածքի արդյունավետության գնահատում չի իրականացվել:

Գործող ՌԾ-ի նպատակների իրակացմանն ուղղված միջնաժամկետ պլանավորում չի իրականացվում: Կառուցում իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումների տարեկան կտրվածքով պլանավորում: Սակայն այս պլանները չեն բխում ՌԾ-ից և վերլուծություններ իհմնականում չեն ընդգրկում: Քոլեջում մշտադիտարկման աշխատանքները չունեն համակարգային և պլանավորված բնույթ:

Որակի ապահովում՝ որպես առանձին գործառույթ, քոլեջում իրականացվել է դեռևս 2014թ.-ից, երբ քոլեջն անցել է ISO 9001:2008 միջազգային ստանդարտներին համապատասխանության հավատարմագրում:

Սակայն ՌԱ համակարգը և մշակույթը դեռևս լիարժեք ներդրված չեն և անհրաժեշտ է համակարգել ՌԱ ուղղությամբ տարվող աշխատանքները:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/սպեղծագործական գործունեությունը գարգացման միգումներ ունեն:

Քոլեջը որոշակի քայլեր է ձեռնարկել հետազոտական/ստեղծագործական միջավայր ձևավորելու և նորարարությունները խթանելու ուղղությամբ: Արդյունքում առկա են գրանցված հաջողություններ: Միջազգայնացման և արտաքին կապերի ուղղված միջոցառումները նպաստել են կրթական ծրագրերի բարելավմանը և նոր հնարավորությունների ստեղծմանը: Այդուհանդերձ միջազգայնացման և արտաքին կապերի ուղղությամբ իրականացվող աշխատանքները կանոնակարգված չեն:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ծրագիրը իհմնականում իրատեսական է և պլանավորված բարեփոխումները կրերեն փոփոխությունների, սակայն պետք է նախատեսել պարբերաբար մշտադիտարկումներ, որպեսզի ապահովեն նախատեսվող մշակումների իրագործելիությունը:

Ենելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:
2. Հավատարմագրում շնորհելու որոշման իրապարակումից հետո՝ երկամյա ժամկետում ՊՈԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց, հաշվի առնելով «Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում», «Որակի ապահովման ներքին համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. Հատուկ ուշադրություն դարձնել.
 - ՌԾ-ի նպատակներից բխող գործողությունների պլան-ժամանակացույցի մշակմանն ու իրականացմանը,

- ՄՈՒՀ-ի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի կատարողականի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
 - ՌԾ-ից բխող կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման և հաշվետվողականության, կառավարման գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմների ներդրմանը,
 - քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
 - Վելուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված հաշվետվությունների իրականացմանը,
 - որակի ապահովման արդյունավետ մեխանիզմների ստեղծմանն ու կիրառմանը,
 - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
4. Կազմակերպել իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին առողիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր գեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԵԻՊՔ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի

նախագահ

2021 թ. հունիսի 24

թ.Երևան

Ա. Սահյան